ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«31» 07 2019թ.
No 1/18-2/43386-2019

Ա/Ձ Հայկ Մարտիրոսյան-ի տնօրեն՝ Հայկ Մարտիրոսյանին
ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 1-ին թաղամաս 46 շենք, բն. 4
հեռ.՝ 099 32-99-99, էլ. հասցե՝ Pe-h.martirosyan@mail.ru

Հարգելի պարոն Մարտիրոսյան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և Ա/Ձ Հայկ Մարտիրոսյան-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 2019 թվականի հունիսի 10-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1 ծածկագրով գնման Պայմանագրի Հավելված 1-ով հաստատված գնման ժամանակացույցի համաձայն Վաճառողը պարտավորվել է մատակարարել 1-ին չափաբաժնի մասով 1250 կգ. <<MONGE ENERGY>>, 2-րդ չափաբաժնի մասով 800 կգ. <<MONGE MEDIUM STARTER>> և 3-րդ չափաբաժնի մասով 700 կգ. <<MONGE PUPPI AND JUNIOR>> ապրանքատեսակի չոր կեր:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 12.06.2019թ-ին և Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանված առաջին չափաքանակների համար՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրացուցային օր (01.07.2019թ. ներառյալ), իսկ մյուս մասի համար՝ ըստ պատվիրատուի բանավոր պահանջի՝ 5 օրացուցային օր:

Պայմանագրով սահմանված ժամկետում՝ 19.06.2019թ-ին Գնորդին մատակարարվել է 1-ին չափաբաժնի մասով 240 կգ. <<MONGE ENERGY>> ապրանքատեսակի չոր կեր, իսկ մյուս մասով և 2-րդ ու 3-րդ չափաբաժինների մասով ընդհանրապես մատակարարում չի իրականացրվել, և Վաճառողը էականորեն խախտել է Պայմանագիրը:

0015, Երևան, Մ. Խորենացու 3,7 Հեռ. +374 60 54 46 57
Կայք՝ www.petekamutner.am Էլ. փոստ՝ secretariat@petekamutner.am

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ստիպված է 2019 թվականի օգոստոսի 1-ից միակողմանի մասնակի լուծել 2019 թվականի հունիսի 10-ին կնքված թիվ ՀՀ ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-2019/6-1 ծածկագրով գնման պայմանագիրը՝ չմատակարարված ապրանքների մասով:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի 6.2 կետի համաձայն Ա/Ձ Հայկ Մարտիրոսյան-ից կգանձվի տույժ 71535 (յոթանասունմեկ հազար հինգ հարյուր երեսունհինգ) ՀՀ դրամ և պայմանագրի կատարման ապահովում՝ 522500 (հինգ հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

7/31/2019

X

ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: GEVORGYAN EDGAR 4010690054 ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Սպարտակ Հարությունյան
Գնումների համակարգման բաժին
Հեռ.՝060 544 703